

ԱՐԵՎԱԿ ԱՌՈՂԴ
ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Պ

ԲԺԻՇԿ Յ. Գ. ԼՈՍՍ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ
ԻՖԹԵՐԻԱՆ

ՅԵՎ. —
ՊԱՅՔԱՐԸ
ՆՐԱ ԴԵՄ

616-053.2
L-80

30 JUL 2010

ԱՐՏԱՎԱՐՈՒՂՋԱԿՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՎԱՐ ՀԵՐԱԿԱՐԱԳԻՒՆ ԻՆՍՏԻՏՈՒԹ

616-053-2 ԲԺԻՇԿ Յ. Դ. ԼՈՍՈ

L-80

ԱՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ
ԳԻՖԹԵՐԻԱՆ
ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ

ՊՐՈՖ. Ի. ՅԱ. ՍԵՐԵԲՐԻՅԱՆ
ԽՄԲԱՊՐՈՎԵՐԺԱՄԵՐ

Քարգմ. Հ. ԲՈՂԴԱՆԵՅԱՆ

ԱԶԱՎ-ՍԵՎՈՎՈՎՅԱՆ ՅԵՐԿՐՈՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴՅՈՒՆՎԱՐ ՀԵՐԱԿԱՐԱԳԻՒՆ ԻՆՍՏԻՏՈՒԹ

ՈՒՍՏՈՒ-ՔՈՆ-1935



013 MAY 2013

5309

Աշխատավորների առողջապահության համար մղվող պայքարում, այլ միջոցառումների հետ միասին, շատ մեծ նետնակուրյուն ունի մոր ու մանկան հիգիենայի ու հիվանդությունները կանխելու մասին հիմնական գիտելիքների լայն ծավալումն աշխատավորների միջև:

Մայրության յեկ մանկության պահպանության յերկրային ինստիտուտը, Ազով-Սեվծովյան յերկրային համարական հանձնարարությամբ, կազմել ե մի շարժ հանրամատչելի բռօյաւներ, վորոնի վերաբերում են հիգիենայի յեկ մոր ու մանկան առողջապահության հարցերին:

«Յերեխանաների դիմքերին յեկ պայքարը նրա դեմ» բրույրը կազմել ե ինստիտուտի գիտական աշխատակից բժիշկ Յ. Դ. Լոսով, պրոֆ. Ի. Յա. Սեւերիիսկու խմբագրությամբ:

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՅԵԿ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱ-
ՆՈՒԹՅԱՆ ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



8366-53

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային իշխանությունը շատ մեծ ուշադրություն է նվիրում այն պայքարին, վոր մղվում և մանուկների առողջ հերթափոխության համար: Մանուկների առողջապահության գործում մենք, հեղափոխության տարիների ընթացքում, ահազին նվաճումներ ենք ունեցել:

Ցարական Ռուսաստանը շատ քիչ հոգատարություն և միջոցներ եր նվիրում մանուկների առողջության համար պայքար մղելու գործին: Ծանր հարկեր, ուժից վերաշխատանք, փոքր աշխատավարձ, մեծ ընտանիք — այս բոլորն այնքան եր ճնշում, վոր ընդհանրապես հնարավորություն չեր տակիս մտածելու առողջության մասին և մանավաճանդ մանուկների առողջության մա-

սին: Յերեխսան մեռնելիս՝ ընտանիքի մեջ
սովորաբար ասում եյին՝ «աստված տվեց,
աստված ել վերցրեց», ու յերեխսաները հա-
զարներով եյին մահանում:

Ծնողների աղքատության և անկուլտու-
րականության հետևանքով մանուկների մեջ
յերրորդական մասը մահանում եր մանկա-
կան հիվանդությունների պատճառով։ «Ըլ-
ծակ», «ծամվածք», «որորոց», «խանձարուր»
և այլն — ահա այն միակ հոգատարությունը
մանուկների մասին, վոր և արգելը եր հան-
դիսանում նրանց նորմալ զարգացմանը։

Յեզ Բնչ կարող եր անել մայրն իր յերե-
խայի համար այն ժամանակներում։ Մայր-
կինը մի ընկճված արարած եր, վոր գտնը-
զում եր և յեկեղեցու և իր ամուսնու ճշնշ-
ման տակ։ մնուախապաշտությունը, խափարը
և տգիտությունը միանգամայն կաշկանդել
եյին մորը, իսկ նրա հետ միասին նաև ման-
կանը։ Պատահում եր, վոր կենդանիներն
ավելի եյին արժանանում ուշադրության,
քան յերեխսաները։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո
ամենախորը փոփոխություններ են առաջա-
նում։ Վերակառուցվում ե կենցաղը, փոխ-
վում ե կնոջ դրությունն ընտանիքում, ամ-

բանում ե աշխատավորների նյութական վի-
ճակը, աճում ե կուլտուրականությունը։ Յե-
րեվան ե գալիս հոգատար վերաբերմունք
դեպի մանուկները. կազմակերպվում են ման-
կական հիմնարկներ, կոնսուլտացիաներ, կաթ-
ողենի խոհանոցներ, մսուրներ, մանկական
ոջախներ. մանուկն ստանում ե կանոնավոր
մնունդ, խնամք, իսկ մայրն ապահովված ե
խորհրդով, ոգնությամբ և ղեկավարությամբ
այն հարցերում, վորոնք նրա յերեխսյի
առողջությանն ու դաստիարակությանն են
վերաբերում։

Աշխատավորների բարեկեցության և կուլ-
տուրականության աճումը, սոցիալիստական
պետության կառուցման մեջ կնոջ մաս-
նակցությունը, պետության հոգար յուրա-
քանչյուր աշխատավորի կյանքի և առողջու-
թյան մասին — այս բոլորը բարեհաջող պայ-
մաններ են ստեղծում այն պայքարում, վորը
տարվում ե հիվանդությունների դեմ ընդ-
հանրապես և մանկական հիվանդություն-
ների դեմ մասնավորապես։

ԻՆՉ Ե ՎԱՐԱԿԻՉ ԳԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ՆԱ ՓՈԽԱՆՑՎՈՒՄ

Մանուկների հիվանդությունների մեջ հաճախ են պատահում վարակիչ հիվանդություններ՝ զիֆթերիա, քութեշ, կարմրուկ, խոզուկ (ականջագեղձի ուռեցք) և այլն:

Վարակիչ են կոչվում այն հիվանդությունները, վորոնք միկրոբների (բացիների) միջոցով մեկ մարդուց մյուսին են փոխանցվում: Միկրոբները շատ մանր կենդանի ելակներ են, վորոնք տեսանելի յեն միայն մանրագիտակով (դա խոշորացնում է դիտելի առարկան և կազմված է մի քանի շարք ապակիներից): Ցուրաքանչյուր հիվանդություն առաջանում է մի վորոշ միկրոբց, այդ միկրոբն ուրիշ հիվանդություն չի կարող առաջացնել: Որինակ՝ զիֆթերիա

առաջացնողը մի տեսակ միկրոբ է, կապույտ հազ առաջացնողն՝ ուրիշ տեսակ, խոզուկ առաջացնողը մի այլ տեսակ միկրոբ և այլն:

Միկրոբները կամ բացիները մի մարդուց մյուսին կարող են փոխանցվել անմիջական շփման միջոցով, յերրորդ անձի միջոցով, ողի միջոցով, մննդի միջոցով և այլ ճանապարհներով:

Շատ հաճախ այնպես ե պատահում, վորիվանդի հազարուց կամ փոնդտալուց նրաբերնից կամ քթից լորձի ամենամանրիկ կաթիներ են ընկնում ողի մեջ. այդ կաթիները միկրոբներ ել են պարունակում իրենց մեջ. մի փոքր ժամանակ ողում տարութերվելուց հետո, այդ միկրոբներն ընկնում են առողջ որգանիզմի մեջ և հարվածառումնրան: Այսպիսի միկրոբներ կարող են լինել նաև մեկ շրջապատող ամեն տեսակ առարկաների՝ կանկարասիների, տնային պատկանելիքների, վոտնամանի, մննդի և այլնի վրա: Միկրոբներն այդ առարկաների վրա կամ իրենք են նստում կամ փոխադրվում են մարդու ձեռքով, ճանձերի միջոցով և կամ փոխանցվում են այն անձերի միջոցով, վորոնք վարակիչ հիվանդներ են խնամում:

ԻՆՉ Ե ԳԻՖԹԵՐԻԱՆ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՆՐԱՆՈՎ ՎԱՐԱԿՎՈՒՄ

Դիմիթերիան — զա ամենածանր վարակիչ հիվանդություններից մեկն ե. նա հարվածում ե գլխավորապես մանուկներին: Նրանով ամենից շատ հիվանդանում են 1 տարեկանից մինչև 4 տարեկան հասակի մանուկները. ավելի քիչ են հիվանդանում ծծկեր յերեխանները. շատ քիչ են հիվանդանում հասակավորները:

Հաշվված ե, զոր 100 յերեխայից մոտ 20-ը հիվանդանում են մինչև 1 տարեկան հասակում, 100 յերեխայից յօ-ը՝ 1 — 4 տարեկան հասակում, 45-ը՝ 5. լից մինչև 9 տարեկան հասակում, 29-ը՝ 10. լից մինչև 14 տարեկան հասակում: Վնրքան մարդը հասակավոր ե, այնքան ել քիչ ե հիվանդանալու վտանգը: Վաթսուն տարեկանից յեծ մարդիկ դիֆթերիայով համարյա չեն հիվանդանում:


Դիմիթերիան հին հիվանդություն ե: Սպանիայում նա զիտվել ե գեռ XVI և $XVII$ դարերում: Ժողովուրդը նրան կոչում եր «փտած փողացավ» կամ «գառոտելո» (գառոտելո՞յն այն վզկապն եր, զորով սպանիական դահճաները խեղդաման եյին անում մահվան

բատապարտվածներին): Այս հիվանդությունն ահազին մահացություն եր պատճառում մանուկներին. նա գլխավորապես հարվածում եր չքավորներին, վորովհետեւ խիտ բնակչությունը, կուրտուրական մակարդակի ստոր աստիճանը և բնակարանային վատ պայմանները լավ հող եյին հանդիսանում հիվանդության փոխանցման համար: Դիմիթերիան սովորաբար յերեվան ե գալիս բռնկումներով, իբրև համաձարակայդ համաձարակներին զոհ են զնում հազարավոր մանկական կյանքեր: Դիմիթերիայի համաձարակն ավելի հաճախ բռնկում ե ձմեռը և աշնանը, յերբ մանուկները մեծ մասամբ զուրկ են թարմ ողից ու արեից, և նրանց որգանիզմն ել շատ ավելի յե թուլցած լինում:

Մարդիկ զիֆթերիայով հիվանդանում են այն ղեպքում, յերբ նրանք վարակվել են դիմիթերիայի միկրոբով: Այս մանրիկ կենդանի եյակին զտել ե Լեֆլեր գիտնականը, վորի անունով ել կոչվում ե նա:

Այդ միկրոբները ցպիկների, գնդիկների կամ խխունջիկների ձև ունեն. ցպիկների ներսում տեսանելի յեն մանրիկ հատիկներ: Այս միկրոբները կամ, ինչպես նրանց կո-

չում են, Լիֆլերի ցպիկները մեծ մասամբ դժուգում են հիվանդների քիթ, քթա-կլանային լորձաթաղանթի փառերում, յերբեմն ել շնչափողում և նրա ճյուղավորումներում՝




Դիֆթերիայի բացիկները:

բրոնխներում. Նրանք կարող են լինել առհասարակ մարմնի այն բոլոր մասերում, զորոնք լորձաթաղանթով են ծածկված, ինչպես պորտն ե, աչքերը և հեղտոցը:

Դիֆթերիայի միկրոբն, ընկնելով լորձաթաղանթի վրա, սկսում է բազմանալ այն-

ուեղ և թույն արտադրել. լորձաթաղանթների վրա գոյանում են սպիտակավուն-գորշագույն կամ գորշագույն-դեղնավուն փառեր. այս փառերն այնպես պինդ են նստած



Դիֆթերիայի հատիկավոր բացիկները:

Մջապատի հլուսվածքներին, վոր բամբակետամպոնով նրանք հանելու ժամանակ դժվարությամբ են պոկվում:

Դիֆթերիայի միկրոբների արտադրած թույնը թունավորում է մարդու կարեոր

որդանները՝ սիրտը, ներվերը, յերիկամունք-ները և այլն ու, յեթե բժշկական ոգնություննը ժամանակին չհամնի, կարող ե մահ պատճառել: Դիֆթերիայից մահանում են մեծ մասամբ մինչև 1 տարեկան հասակի մասնուկները (100 հիվանդից 40 հոգին):

Դիֆթերիայով վարակվել կարելի յե հիվանդի հետ անմիջական շփում ունենալուց, նրան համբուրելուց, նրա հազից և նոույնիսկ նրա հետ խոսելուց. դիֆթերիայով հիվանդի բերնից գուրս են ցայտում նրա թքի կաթիլները. դրանք ընկնում են ողի մեջ, առողջ մարդն՝ այդ ողը շնչելով՝ կարող է վարակվել: Ճիշտ ե, ամեն մարդ դիֆթերիայով չի հիվանդանում. դա կախված ե մարդու այդ հիվանդության հանդեպ ունեցած զգայունակությունից: Դիֆթերիայով վարակվել կարելի յե նաև հիվանդի գործածած իրերի միջոցով, ինչպես նաև մննդի և մանավանդ կաթի միջոցով: Յեթե դիֆթերիայով հիվանդ ունեցող կաթնավաճառ կինը և հիվանդին ե խնամում և առանց նախապես ձեռները լվանալու և հագուստը փոխելու՝ կովերին ե կթում, այդպիսին կարող ե դիֆթերիայի միկրոբները կաթին փոխադրել: Յեկ, իհարկե, ով վոր այդ կաթը խմի առանց

յեռացնելու, կարող ե դիվթերիայով վարակվել:

Պատահում են դեպքեր, յերբ դիֆթերիայով վարակվում են վոչ թե ուղղակի հիվանդից, այլ այն մարդկանցից, վորոնք թեև հիվանդ չեն, բայց իրենց մեջ կրում են դիֆթերիայի վարակը, այսինքն վարակակիրներ են. դիֆթերիայի վարակակիր կարող են լինել թե իրենք, հիվանդներն՝ աւողջանալուց հետո, և թե նրանք, ովքեր խնամել են հիվանդին:

Վորապեսզի ստուգեն, վոր առողջացող հիվանդը և նրան խնամողները դիֆթերիայի վարակ չեն կրում իրենց մեջ, հետազոտում են այդպիսիների բուկն ու քիթը. յեթե հետազոտումից պարզվի այդ միկրոբների առկայությունն, ապա չպետք ե թույլ տալ, վոր մանուկները մոտենան այդ տեսակ առողջներին և մանավանդ ուրիշ յերեխաներին:

ԻՆՉՊԵՍ Ե ԸՆԹԱՆՈՒՄ ԴԻՖԹԵՐԻԱՆ

Թույնը մարդու որգանիզմը մտնելուց հետո, 2—3-րդ որը, իսկ յերբեմն ել նույնիսկ 14-րդ որը, յերեվան են գալիս հիվանդության հիմնական նշանները՝ ջերմաստի-

ճանը բարձրանում ե, յերեմի սիրտն ե
յետ տալիս, կուլ տալու ժամանակ ցավ
ե զգացվում, նշան գեղձերն ուռչում են
և փառ կապում:


Դիմիթերիայով հիվանդության յերեք տար-
բեր տեսակներ են լինում՝ թեթև, միջին և
ծանր զիմֆերիա: Թեթև զիմֆերիայով սո-
վորաբար հիվանդանում են մեծ հասակի յե-
րեխաները՝ այս դեպքում կոկորդը միքիչ
ցավում և փառով ե ծածկվում. ջերմաստի-
ճանը հասնում ե 38—38,5°, ընդհանուր
կացությունը համարյա չի խանգարվում.
բժշկության 3—5-րդ որը փառերն արդեն
չքանում են, իսկ 7—8 րդ որը յերեխան
բոլորովին առողջանում ե:

Միջին տեսակի զիմֆերիայով հիվանդա-
ցողները դառնում են գանդաղկոտ, ախոր-
ժակ չեն ունենում, զգում են զլխացավ,
յերեմին ել կուլ տալիս ցավ են զգում, ջեր-
մաստիճանը հասնում ե 39°, բերանից անա-
խորժ հոտ ե գալիս, յեզուն սպիտակ և
փառ կապած, յերկու նշագեղձերն ել մե-
ծանում, կարմրում են և գորշ-սպիտակա-
վուն փառով ծածկվում:

Վերջապես ամենածանրը՝ զիմֆերիայի
յերրորդ տեսակն ե, վոր յերեմի զարդանուժ

ե առաջին յերկու տեսակներից, յերեմին ել
յերեվան ե գալիս հիվանդության հենց սկզբ-
բից, հիվանդությունն սկսվում ե հանկարծ. յերեվան ե գալիս գլխացավ, սկսվում ե
էոկորդի և փորի ցավը, յետ ե լոտիս
սիրտը, ջերմաստիճանը բարձրանում ե, սաս-
տիկ կարմրում ե բուկը, նշագեղձերն ուռ-
չում և մեծ ու կեղտոտ փառով են ծածկվում.
այդպիսի փառերով ե ծածկվում նաև կա-
կուղ քիմքը, իսկ 2—3 որից՝ նաև կլանի հե-
տիկ պատր: Նշագեղձերի և կլանի սաստիկ
ուռեցքից հիվանդը զժվարությամբ և կուլ
տալիս և շունչ առնում: Յերեխաները բե-
րանով են շնչում, արտաշնչված ողը մի
անախորժ, փտած հոտ ե ունենում. քթից
այրունախառն հեղուկ ե գալիս, շնչառու-
թյունը ծանր ե և խոխոստ:

Այս տեսակի զիմֆերիան շատ անգամ
բարդություն ե առաջացնում, այսինքն՝
հիվանդանում են թոքերը: Հիվանդներն
հենց սկզբից ծանր ապավորություն են թող-
նում, նրանց աչքերի շուրջը սև ե պատում:
յերեխաները դառնում են դանդաղկոտ, յե-
րեմների գույնը գնում ե, յերեմի շատ ան-
հանգիստ են դառնում, կորցնում են ախոր-
ժակը և սաստիկ ծածրավ զգում:



Կանոնական գործությունները պահպանվում են սահմանական ժամանակում:

զիտվում ե զլսավորապես ծծկեր յերեխաների մոտ:

Դիմումը պատճենաբառության ամենաա-
թեթև տեսակը քթի և պորտի գիֆթերիան

Ե, վզրով մեծ մասամբ ծծկերներն ու նորածիններն են հիվանդանում, այս յերկու հիվանդություններն ել սովորաբար ընթանում են առանց բարդությունների և մահացության գեազեր համարյա չեն ունենում: Քթի դիֆթերիայի նշանն ե քթից՝ և սովորաբար միայն մեկ քթածակից՝ ծորող արյունախառն-լորձային արտապատումք: Արտազատված լորձում միշտ կարելի յե կեփերի միկրոբներ գտնել:

Ավելի վտանգավոր ե աչքերի դիմութերիան,
վորովնետե, յեթե ոգնությունը ժամանա-
կին չհասնի, յերեխան կարող ե կուրանալ:

ԿՐՈՒՊ (Ա.ՔԼՈՐԱԽԵՂ.Դ)

Կրուպը գիֆթերիայի այն տեսակն ե,
վորը հարվածում ե խոր շնչուղիները՝ շնչա-
փողն ու նրա ճյուղավորումները — բռննի-
ները։ Այս դեպքում ձայնը խզվում ե, իսկ
2—4 որից նույնիսկ բոլորովին փակվում ե:
Կրուպի ժամանակ շնչառությունը դառնում
ե շշական, հազը նմանում ե հաջոցի, շնչա-
ռությունը հետզհետե դժվարանում ե, փա-
ռերը բոլորովին խցում են շնչափողը, հի-
վանդր դառնում ե անհանգիստ, անդադար

թրփրտում ե մահճակալում, զլուխը հետ ե գցում, վորպեսզի կարողանա ջնչառությունը հեշտացնել, յերեսի գույնը գնում ե, շրթունքներն ու յեղունդները կապտում են, մաշկը դառնում ե սառը, և հաճախ, յեթե բժշկի ոգնությունը ժամանակին չհասնի, յերեխան մահանում ե: Այսպիսի հիվանդը պետք է շուտափույթ ուղերացիայի յենթաքրկիլի, վորից հետո նրա ջնչառությունը թեթևանում ե:

ԴԻՔԹԵՐԻԱՅԻ ՅԵՎ ԿՐՈՒՌԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բարդություններից պետք ե հիշատակել սրտի գործունեյության թուլությունը, վորը կարող ե անդի ունենալ նաև թեթև տեսակի դիֆթերիայի ժամանակ: Սրտի գործունեյության այդ թուլությունն արյան մեջ մտած դիֆթերիայի թույնի հետևանք ե և հաճախ հիվանդի մահով ե վերջանում:

Բացի սրանից, բարդություններ են առաջանում նաև այն գեղքում, յերբ ուսչում են պարանցագեղձերը, յերբ կակուղ քիմքը և կանը անդամալուծվում են. այսպիսի լուծանքներ (պարալիչ) պատահում են հիվանդության 2—4 շաբաթում, յերբեմն ել

ավելի վաղ յերեխայի կուլ տալու գործողությունը խսնդարվում ե, և մնունզն ընկնում ե քթակլանը: Առաջանում են վերջավորությունների (ձեռների ու վոտների), պարանոցի և իրանի մկանների թեթև ու ծանր տեսակի լուծանքներ, բայց այդ լուծանքներն անցնում են, իսկ կոկորդի շնչային մկանների լուծանքները յերբեմն մահվան պատճառ են հանդիսանում:

Լինում են և ուրիշ բավական ծանր, բարդություններ, ինչպես՝ թոքերի բորբոքում, յերիկամունքների բորբոքում և բրոնխիտներ:

ԴԻՔԹԵՐԻԱՅԻ ԲՈՒԺՈՒՄԸ ՅԵՎ ԳԻՎԱՆԴՆԵՐԻ ԽՆԱՄՄԸ

Դիֆթերիայով հիվանդին նախ և առաջ անհրաժեշտ ե խսկույն հիվանդանոց տեղափոխել, վորովհետև միայն հիվանդանոցային պայմաններում կարող ե նա անմիջապես ստանալ հարկավոր ոգնությունը և համապատասխան խնամքը:

Հիվանդի բժշկության համար ամենից առաջ (նույնիսկ գեռ հիվանդանոց չփոխադրած) հարկավոր ե շիճուկ ներարկել:

Քանի դեռ չեւ գտնաված հակագիֆթերա-

յին բուժական շիճուկը, մանուկների մահացությունը յուրաքանչյուր 100 հոգուց հասնում եր 50-ի: 1890 թվին գերմանացի գիտնական Բերինգը գտավ հակաղիֆթերային բուժական շիճուկը, և՝ այդ ժամանակից սկսած՝ դիֆթերիայի պատճառով մահացողների թիվը զգալապես պակասեց:

Հակաղիֆթերային շիճուկն այսպես է պատրաստվում. յեզների, վոչխարների և գլխավորապես ձիերի արյան մեջ դիֆթերային թույն են (տոքսին) ներարկում, նախ քիչ քանակով, իսկ ապա, կը կնվող ներարկումների ժամանակ, այդ քանակն ավելացնում են. կենդանին սկզբում հիվանդանում ե, իսկ հետո նրա արյան մեջ սկսվում ե արտադրվել հակաթույն, վոր կոչվում ե անտիտոքսին:

Անտիտոքսինն այնպիսի հատկություն ունի, վոր նրանով պատվաստված յերեխան անընդունակ ե դառնում դիֆթերիայի վարակից ազդվելու: Յերբ կենդանու արյան մեջ կուտակվի բավականաչափ անտիտոքսին, ապա նրանից արյուն են առնում. այդ արյունը նստելուց հետո, վերցնում են նրա միայն հեղուկային մասը՝ շիճուկը, վոր և լցնում են փոքր շների մեջ՝ դիֆթերիան

թժշկելու ժամանակ այդ շիճուկն ե, վոր ներարկում են հիվանդի մաշկի տակ կամ նրա մկանների մեջ:

Յեթե շիճուկը ներարկվում է ժամանակին, այսինքն հիվանդության առաջին և յերկրորդ որբ, ապա նա բուժական լավ ներգործություն է ունենում հիվանդի վրա, և արդեն 2—3 ժամից հետո հիվանդն իրեն լավ է զգում:

Յեթե շիճուկը ներարկվում է ժամանակից ուշ, այսինքն՝ յերբ դիֆթերային թույնն արդեն մեծ մաս է հասցրել որգանիզմին, այդ դեպքում նա վոչ մի ներգործություն չի ունենում:

Դիֆթերիայով հիվանդացածների միջն մահացության դեպքերը վերացած են, յեթե միայն բժշկությունը կանոնավոր յեղանակով է տարվել:

Յեթե դիֆթերային հիվանդությունն ընթանում է ծանր պայմաններում, ապա շիճուկը ներարկում են մի քանի անգամ:

ՇԻՃՈՒԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Յերեքման պատահում ե, վոր դիֆթերիայով հիվանդացած և արդեն առողջանալ սկսող յերեխայի վրա հանկարծ վարդագույն

մի ցավ ե յերեսւմ, վորը սաստիկ քոր ե
առաջնում սկսում են հոտերը ցավել,
յերեսւմ են այտածության նշանները, յեր-
բեմն ել ջերմաստիճանն ե բարձրանում։
Այս բարդությունը հետևանք ե մեծ քանա-
կությամբ շիճուկ ներարկվելուն և կոչվում
ե շիճուկային հիվանդություն։ Այս հիվան-
դությունը վոչ մի վտանգ չի սպառնում
մանկան առողջության համար և բուժվելու
կարիք չունի։

Յեթե դիմութերիայով հիվանդացած մա-
նուկը հիվանդանոց չի փոխարգված, այլ
մնում ե տանը, ապա անհրաժեշտ են հետե-
յալ միջոցառումները. յերեխային տեղափո-
րել այսպիսի սենյակում, ուր, յեթե կարելի
յե, կահկարասիներ և այլ առարկաներ չի-
նեն. հիվանդի մոտ թողնել միայն մեկ խնա-
մող, վորը չպետք ե հարաբերություն ու-
նենա ընտանիքի մյուս անդամների հետ
և նամոդ հագին ունենալու յե խալաթ և
այնպիսի հագուստ, վորը կարելի լինի լավ
լիքանալ և յեռացնել. ձեռները լվանալու հա-
մար նա պետք ունենա ախտահանող լու-
ծույթ (սուլեմա). սենյակում թողնված
կահկարասին, ինչպես և հատակն ախտահա-
նող լուծույթով սրբել (լիզոր, կարբոլ)։


Հիվանդի սենյակից դուրս գալիս՝ խնա-
մոդը պետք ե հանի իր խալաթը, ձեռներն
ու վոտնամաններն ել ախտահանի, բայց
ավելի լավ կլինի, յեթե ուրիշ վոտնաման-
ներ հագնի։ Հիվանդի պառկած սենյակը
պետք ե ամեն որ խնամքով մաքրվի (թաց
լաթով հավաքել փոշին, նույնպիսի լաթով
սրբել հատակը) և ինչպես հարկն ե, սենյակի
ողը մաքրել. դրա համար հարկավոր ե հի-
վանդին պատուհանից հեռացնել ու վրան
լավ ծածկել. ճերմակեղենը փոխվում ե վոչ
ուշ, քան յերկու որը մի անգամ, իսկ հար-
կավոր գեպօւմ նաև ամեն որ։

Անհրաժեշտ ե վոչնչացնել ճանձերին և
այլ միջատներին, գորոնք վարակի փոխադ-
րողներ են հանդիսանում։

Կարենը ե հետեւ, վորպեսզի հիվանդն
ամեն որ դուրս գնա. դուրս չգնալու դեպ-
քում հարկավոր ե հոգնա դնել։

Անհրաժեշտ ե լավ խնամք տանել բերնի-
մաքրությանը. դրա համար պետք ե հետե-
վել, վոր հիվանդը հաճախակի վողողի բե-
րանն ու կոկորդը (ջրածնի գերթթվուկով),
բորաթթույով կամ մանդանի լուծույթով։
Հետեւ, վորպեսզի հիվանդի ձեռներն, ինչ-
պես և մարմինը մաքուր լինեն։ Հիվանդու-

Թյան առաջին որերում հիվանդին պետք է
տալ ջրալի, տաք և հասակին համապատաս-
խան մննդաբար ուտելիք. մնունդը պետք է



ծնչառությունը հեշտացնելու համար կոկորդը հատուկ փող
ներս մտցնելը:

բերվի հիվանդի սենյակը բոլորովին պատ-
րաստ, իսկ ուտելուց հետո հենց այնտեղ
ել պետք է լվացվեն ամանները:

Հիվանդի ճերմակեղենը լվացվելու յե-


ռուանձին և այն ել անպատճառ յեւաց-
նելով:

Առողջանալուց հետո հիվանդին պետք է
լողացնել և մաքուր ճերմակեղեն ու զգեստ
հազցնել. այն բոլոր իրերը, վոր նա գործ
եր ածում հիվանդության ժամանակ, պետք
է անպատճառ ախտահանվեն, իսկ այն առար-
կանները, վոր չի կարելի ախտահանել (կար-
տոններ խաղալիքներ, գրքեր և նման իրեր),—
այլել:

Կրուպի բուժումը: Այստեղ կարևոր նշա-
նակություն է ստանում ոպերացիան ժա-
մանակին անելը, վորպեսզի յերեխան խեղ-
դամահ չլինի: Նայած հիվանդի դրությանը՝
բժիշկը, հատուկ մի գործիքով, հիվանդի բե-
րանից դեպի կլանն է մտցնում մետաղյա-
մի փող, վորը շուշ առնելու հնարավորու-
թյուն և տալիս հիվանդին. առողջանալուց
հետո փողը հանվում է:

Պատահում են դեպքեր, յերբ աղամա-
խնձորից (կատիկը) ներքեւ բաց են անում
կտրվածք, վորի մեջ մի ծոված փող են
դնում. հիվանդն սկսում է շնչել այդ փողի
միջով: Մի փոքր ժամանակից հետո փողը
հանում են, իսկ վերը կարում: Այսպիսի
ոպերացիաներ կարելի յե անել միայն հիվան-

դանոցային պայմաններում։ Բացի բժշկության այս միջոցներից, հիվանդին տալիս են նաև ուրիշ գեղեր՝ նայած նրա սրտի, թոքերի, յերիկամունքների և այլնի ընդհանուր դրությանը։ Յերբ հիվանդը դժվա-



Ինհալատոր

րությամբ և շնչում, հեշտացնում են նրա շնչառությունը՝ հնարավորություն տալով նրան գոլորշի շնչել մի հատուկ սարքի միջոցով, վորը ինհալատոր և կոչվում։ Ցավերը հաճախացնելու համար բժիշկը յերեխն պատվիրում է հիվանդի կոկորդին տաքացնող կոմպրեսոներ դնել։


ԻՆՉՊԵՍ ՎՈՐՈՇԵԼ ՄԱՐԴՈՒ ԴԻՔԹԵՐԻԱ- ՅՈՎ ՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒ ԶԳԱՅՈՒ- ՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Դիքթերիայով ամենքը չեն հիվանդանում. շատ հաճախ դիքթերիայի վարակը մարդու վրա չի ներգործում. այսպիսի յերեսույթները կարելի յե բացատրել նրանով, վոր որդանիզմի մեջ կա դիքթերիայի հակաթույնը, և դիքթերային միկրոբները մտնելով մարդու որդանիզմը, ապրում են այնտեղ՝ առանց հիվանդություն առաջացնելու։ Որդանիզմի այն գրությունը, յերբ նա անզգայունակ և հիվանդություն առաջացնող միկրոբների նկատմամբ, կոչվում ե իմունիտետ (անվարակելիություն)։

Որինակ, նորածին մանուկներն ոժուված են լինում, այսպես կոչվող բնածին իմունիտետով, յեթե նրանք հակաթույնն ստացել են դիքթերիայով հիվանդացած մորից, սակայն այսպիսի իմունիտետն ույժ ունի միայն 6—12 ամսվա ընթացքում, այդ ժամանակամիջոցից հետո մանուկը կարող է հիվանդանալ։

Դիտումները ցույց են տալիս, վոր մարդիկ դիքթերիայով հիվանդանում են մեծ վասարմբ մեկ անգամ միայն. գրանից հետո

նրանց մեջ առաջանում ե անվարակնելիության ունակությունն այդ հիվանդության հանդեպ: Ընդհանրապես դիֆթերիայով վարակվելու ունակությունը կյանքի տարբեր հասակներում տարբեր ե լինում:



Շեկի մեթոդի դրական ներգործությունը

Վորոշել մարդու զգայունակությունը կամ անզգայունակությունն այդ հիվանդության հանդեպ, հնարավոր ե այն մեթոդով, վոր դիտնական Շեկն ե գտել:

Այս մեթոդի եյությունը կայանում է նրանում, վոր մաշկի տակ ներարկվում ե

շատ քիչ դիֆթերիային թույն. յեթե մարդու արյան մեջ կա հակաթույն (անտիտոքսին) և նա դիֆթերիայի հանդեպ անզգայունակ ե, ապա մարմնի ծակված տեղը մընում ե միանգամայն անփոփոխ. բայց յեթե մի որ անցնելուց հետո ներարկման տեղում կես սանտիմետր արամագծով կարմիր ուռեցք առաջանա (վոր տեկում ե մոտ մի շաբաթ), ապա կարելի յե յեզրակացնել, վոր տվյալ մարդը դգայունակ ե տիֆթերիայի հանդեպ և կարող ե հիվանդանալ նրանով:

ԱԽՏԱԿԱՆԽԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏԸ

Մանուկներին դիֆթերիայով հիվանդանալուց պահպանելու համար, փորձել են զանազան միջոցներ կիրառել, բայց դրական արդյունքներ ձեռք են բերել միայն 1913 թվին, յերբ Բերինգ գիտնականին հաջողվեց գտնել ախտականխական պատվաստը:

Այսպիսի պատվաստների յենթարկվում են առողջ մանուկները (յերիկամունքների և փայծաղի հիվանդություն չունեցողները): Մանուկներին ախտականխական պատվաստի յենթարկելու յեղանակը կայանում ե նրանում, վոր առողջ մանուկներին յերեք ան-

գամ, տաս որը մեջ, պատվաստում են փոքր քանակով տիֆթերիային ախտահանած թույն։ այդ ճանապարհով մանուկների արյան մեջ առաջանում ե հակաթույն (անտիտօքսին), և մանուկները յերկար ժամանակ (3—4 տարի) դիֆթերիայով հիվանդանալու անզգայունակ են դառնում։ Այսպիսի պատվաստի յեն յենթարկում այն մանուկներին, վորոնք ծիկի յեղանակով ստուգման յենթարկվելով՝ դիֆթերիայով հիվանդանալու զգայունակ են ճանաչվում։

Հակադիֆթերային պատվաստները գնալով ավելի և ավելի յեն ընդգրկում մանուկներին, հետևաբար և դիֆթերիայով հիվանդանոցների թիվն իջնում ե։

Մեր Ազով-Սևծովյան յերկրամասում 1934 թվի ընթացքում արված են 100.000-ից ավելի այդպիսի պատվաստներ. դրա հետեւանքով ել զգալիորեն նվազել են յերկրամասում տիֆթերիայով հիվանդանալու դեպքերը։

Այդ բանը կարելի յե տեսնել հետեւյալ աղյուսակից։

Տարիներ	1931 թ.	1932 թ.	1933 թ.	1934 թ.
Հիվանդացումների քանակը	12926	9725	5723	3046

Այսպես, ուրեմն, դիֆթերիայով հիվանդացումներն, ինչպես տեսնում ենք, և տարվա ընթացքում իջել ե ավելի քան 4 անգամ։

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիվանդացումների առաջն առնելն ավելի հեշտ ե, քան թե նրանց բուժումը. հետեւվարար անհրաժեշտ ե մշտական պայքար մղել վարակման վտանգի դեմ։ Վերեվում արգեն հիշել ենք վարակման առաջն առնելու համար գործադրվելիք միջոցառումների մասին։

Այսաեղ պետք ե ավելացնել նաև այն, վոր հիվանդացումները կանխելու գործում շատ մեծ նշանակություն ունեն կենցաղային պայմանները։

Բնակարանների խառնթյունը, թարմ ողիք և արեվի բացակայությունը, անմաքրասիրությունը և անկուլտուրականնությունը բարենպաստ պայմաններ են ստեղծում դիֆթերիայով հիվանդանալու համար։

Դիֆթերիայի միկրոբը շատ արագ է վոչնչանում արեվի ճառագայթների ներգործությունից, այնինչ մութ տեղում նա յերկար է ապրում և պահպանում ե վարակելու իր ընդունակությունը. նա յերկար է ապրում

Նաև խոնավ տեղերում: Այստեղից հեշտ և
յեզրակացնել, վոր հիվանդների և առողջների
բոլոր իրերը, ինչպես և նրանց սենյակները
պետք ե ավելի հաճախ յենթարկել արևի ձա-
ռագայթների ներգործությանը և մշտապես
ժարքել սենյակի ողը:

Մարդ պատք ե առողջ լինի և ամրակազմ,
վորպեսզի ավելի հաջող կերպով դիմադրի
տեսակ-տեսակ հիվանդությունների: Դրա հա-
մար հարկավոր ե որգանիզմը կոփել ֆիզ-
կուլտուրային մարզանքներով, մարմինը
ցուրտ ջրով սրբելով և դուշ ընդունելով,
այսինքն՝ աշխատավորներն իրենք պետք ե
ստեղծեն այն պայմանները, վորոնք անհրա-
ժեշտեն իրենց աշխատանքի ու կենցաղի առող-
ջապահության համար:

Յերկրի բարեկեցության աճումը, անգրա-
գիտության վերացումը, առողջ կրանքի համար
արշավը — այս բոլորը հնարավորություն են
տալիս պայքարելու առողջ և ամրակազմ
հերթափոխության համար:

Կուսակցության և խորհրդային իշխանու-
թյան հոգատարությունը մանուկների մասին,
նրանց ընդգրկումը մանկամսութներում,
ոջախներում, մանկապարտեզներում, ուր
պարտադիր կարգով արգում են ախտական-

խական պատվաստներ, զգալիորեն իջեցնում
են մանուկների հիվանդացումները և մահա-
ցությունը:

Դիֆթերիայով հիվանդացումների ծավալ-
ման ժամանակ մանուկներին պետք է հեռու
պահել վարակի ոջախներից. չպետք ե թույլ
տալ, վոր նրանք կինոներ ու թատրոններ-
գնան և ընդհանրապես այնպիսի տեղեր, ուր
ժողովրդի բազմություն ե հավաքվում. մա-
նուկներին չպետք ե տանել այն տները, ուր
անորոշ հիվանդություն ունեցող հիվանդ կա-
յերեխայի ձեռքը չտալ այն խաղալիքներն
ու իրերը, վորոնք հիվանդի ձեռքի տակ են
յեղել. կաթ տալ անպահառ յեռացրած,
վորովինետե հում կաթի մեջ կարող են դիֆ-
թերային միկրոբներ լինել:

Յեթե մենք վերցնենք դիֆթերիայով հի-
վանդացումների թիվը մինչև հեղափոխու-
թյունը, ապա կտևնենք, վոր 1910 թվին
Ռուսաստանում հիվանդացել ե 681 հազար
մարդ, 1911 թվին — 558 հազար մարդ: Արանք
շատ մեծ թվեր են:

Հեղափոխությունից հետո այս թվերն զգա-
լիորեն իջել են:

Բայց դրանով բավարարվել չի կարելի:
Անդուդ յեռանդով պայքար ե մզմում



ի ջեցնելու համար մանուկների հիվանդացում-ներն ընդհանրապես և դիֆթերիայով հիվանդացումները մասնավորապես: Յեվ այս պայքարը պետք է շարունակվի, մինչև վոր դիֆթերիան խսպառ վերանա:

Սոցիալիստական շինարարությունը «աշխատանքի և կենցաղի այնպիսի պայմաններ և ստեղծում բանվոր դասակարգի համար, վորը հնարավորություն և տալիս մեզ աճեցնելու բանվորների նոր սերունդ՝ առողջ և կենսուրախ, վորոնք ընդունակ են խորհրդային յերկրի հզորությունը պատշաճ բարձրության հասցնելու....», — ասել ե ընկ. Ստամբուլությունը:

Մենք կարող ենք հպարտանալ, վոր մեր յերկրը, խորհուրդների յերկրը, մեծ նվաճումներ և ձեռք բերել վարակիչ հիվանդությունների իջեցման դեմ, մանուկների մահացության իջեցման դեմ իր մղած պայքարում: Բայց մենք չպետք ե հանգստանանք այն նվաճումներով, վոր արդեն ձեռք ենք բերել, այլ պարտական ենք այսուհետև ևս շարունակել մեր աշխատանքը՝ մանուկների հիվանդացումների և մահացության իջեցման համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b9

Ներածություն	3
Ինչ և գարակիչ հիվանդությունը և ինչպես և նա փխանցվում	6
Ինչ և դիֆթերիան և ինչպես են նրանով գարակվում	8
Ինչպես և ընթանում դիֆթերիան	13
Կրուպ (աքլորախեղի)	17
Դիֆթերիայի և կրուպի բարդությունները	18
Դիֆթերիայի բուժումը և հիվանդների խնամքը	19
Շիճուկային հիվանդություն	21
Ինչպես գրոշել մարդու՝ դիֆթերիայով հիվանդանալու զգայունակությունը	27
Ախտականիսական պատվասար	29
Ցեղակացություն	31



ԸՆԿ. ԸՆԹԵՐՅՈՂ.

Հայտնեցիք ձեր կարծիքը այս գրքի մասին
հետեւյալ հասցեյով.

Гор. Ростов-Дон, Буденновский пр.,
№ 30, Азово-черноморское Краевое
Книгоиздательство, армянская секция.

Նամակները կարելի յեւ ուղարկել առանց
նամակադրումի:

Отв. ред. Г. А. Потенц

Пом. тех. ред. Д. М. Джинибалаев

Издание 372/4632 Об'ем 1^{1/2} печ. листа. Статформат Ав—305x148
Упаковка 00-11426. Тираж 800 экз. Заказ 3838. Сдано в набор
4 VIII-1935 г. Подписано в печать 20 VI-1935 г.

Типография им. „Стакки 1902 года“ г. Ростов на Дону.

ՀՀ Ազգային գրադարան



NL0271580

116/1955
Ц 94.81

5309

ԳԻՐ 20 ԿՈՄ.
Цена коп.

На армянском языке

ДОКТОР Ц. Д. ЛОССЬ
**ДИФТЕРИЯ У ДЕТЕЙ
И БОРЬБА С НЕЮ**

АЗОВО - ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО
Ростов н-Д., Буденновский пр , № 30

Գ Ր Ա Պ Ո Հ Ե Ս Ը
Ռուսակ-Դան: Մատկովակայա, № 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԿԳՈՑԵՆՏՐ)